ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

20.11.2015 16:45

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր՝ նոյեմբերի 20-ին, հյուրընկալվել են Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերի շուրջ 70 ուսանողներ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնած հանդիպման նպատակն էր ծանոթանալ փաստաբանական գործին և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի գործունեությանը:

ԵՊՀ ուսանողները շրջայց են կատարել Հանրային պաշտպանի գրասենյակում: ՀՊԳ ղեկավար Մելանյա Առուստամյանը ներկայացրել է Հանրային պաշտպանի գործունեության մանրամասները և գրասենյակի աշխատանքը:

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը Փաստաբանական դպրոցում ներկայացրել է ընդունելության և ուսուցման ընթացակարգերը, մանրամասնել այն փաստաթղթերի ցանկը և այն կարգավիճակը, որ պետք է ունենա քաղաքացին Դպրոց դիմելու իրավունք ստանալու համար: Սիմոն Բաբայանի խոսքով, Փաստաբանական դպրոց կարող էին ընդունել իրավաբանի բազային կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ) ունեցող քաղաքացիները, սակայն ՀՀ սահմանադրական դատարանը կայացրել է որոշում, որով Փաստաբանական դպրոց կարող են ընդունվել նաև իրավագետի մագիստրոսի կոչում ունեցող քաղաքացիները, եթե նրանք չունեն իրավաբանի բակալավրի բազային կրթություն:

ՀՀ փաստաբանների պալատում աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանը ներկայացրել է Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի դահլիճում Պալատի խորհրդի աշխատանքը:

Ուսանողներին ընդունել է նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Առաջարկվող նորություններ

06.05.2014ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

21.11.2014ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })